# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արգավանդ Կահույք ՍՊԸ-ն ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ25/12 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 29 | Զգեստահարանը 5 դռնանի է, այն ամբողջությամբ, ներառյալ միջնապատերը պատրաստված կլինի 18 մմ հաստությամբ լամինացված ФՏՍ-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 1- մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4- մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Հետնապատը կլինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն ФՏՍ-ի գույնի: Աշխատանքային հարթության եզրերը հղկված ու մշակված կլինեն, առջևի անկյուններին կամրացվեն ռետինե կլորացված հատուկ դետալներ: Զգեստապահարանի արտաքին չափսերն են՝ 1708 x 300 x 1644 մմ (L x Խ x Բ), յուրաքանչյուր սեկցիայի ներսի չափսերն են՝ 320 x 300 x 1300 մմ (L x Խ x Բ) մմ: Բոլոր 5 բաժիններում էլ, ողջ լայնությամբ և խորությամբ նախատեսված լինի՝ վերևի մասում գլխարկի, իսկ ներքևում կոշիկների համար առանձնացված հետևյալ չափսերի՝ 320 x 300 x 200 մմ (L x Խ x Բ) տեղեր(բաց դարակներ): Բոլոր սեկցիաներում գլխարկների դարակի տակից ամրացված կլինի մետաղական երկտեղանի կախիչ: Դռներն ամրացված են և փակվում են 3-ական բարձրորակ ծխնիներով: Կապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների և ծչեպների: Կապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը կլինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, հարմարավետ՝ շահագործման համար: Գույնը կհամաձայնեցվի մանկապարտեզի տնօրինության հետ: Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի հաշվին մատակարարի միջոցներով: Անհրաժեշտության դեպքում կամրացվի պատից: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АРГАВАНД МЕБЕЛЬ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ25/12 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 29 | |